

U.S. Negatives

891.99
2 - 91

1991

2124

Հայոց ազգային թանգարան
18 NOV 2011

ՄՈՎԱՐ ՂՈԽԵՍԵՆ



ՄՈՎԱՐ ՂՈԽԵՍԵՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱԳՈՅ

Տպատան «Ելիբուկ»

1911

891.99
R-91

Եղ Հայոց ԱՇ-օ անոք
1911թ
Տրամադրել
Ավելացն

Հրատարակութիւն Վաղ. Ստեփ.

ԹՈՒԹԵԱ ՂՈՒԽԵԱԵՆ

891.99

Դ. 91.

Մը



ԱՐԳԵՅՈՒԹ

120



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան «Յ ի բ ա կ»

1911

19.06.2013

40829/2



ԱԼԱԳԵԱԶ

Արտասպելու իրաւունքը վերապահ-
ւած:

ՀՀՀՀՀ
1001

Գարնեն է, գարնեն, ազատ
ֆարման է,
Զուրն Ալագեազի գեղ
ու գարման է:

Երկճեղք կատարը ցցած դէպի վեր,
Դէպ-դէպ ամպերը դէմքին է առեր:
Եւ քանի դարեր հպարտ, հեղանազ,
Սարերի սիրուն սարդար Ալագեազ:
Խոր քունն էր գրել նախշուն աչքերուն,
Սրբեց արել պարգևեց գարուն:
Զունն ու սառուցը փխրան ընկան հալ,
Պատանը պատուեց ճերմակ ու չալ-չալ.

Պատանի տակից արտասւեց կաթ-կաթ,
Աղբիւր ու առւակ թւով շատ ու շատ:
Թփերի տակից, քարերի դօշից,
Ծմակ ծորակից, Զըլու, Մանթաշից
Ծնծնաց ծորեց ու կազմեց վտակ,
Զառիվայր սահեց ամեն կողմ գետակ:
Պաղ-պաղ ջրերը գուլալ գլգըլան,
Փախս առան իջան Շիրակ, Աբարան.
Բարձր Համբերդից գետակներ վազին,
Վազին խառնւան խելառ Արազին:
Ինչքան առւակներ, առու և արխեր,
Բաց է թողնում ցած ծարաւած գեղեր.
Ու ինքը ծլաւ ծաղիկ ծերունին,
Եւ կարօտում է գարնան ողջունին:
Մերթ ուրակ սրտով ժպտում ծիծա-
ղում,
Մերթ ամպերի հետ պար բռնում խա-
ղում.

Մերթ սիրով փարւում ամպին վեր
յուշով,
Մերթ դէմքը ծածկում թանձր մշու-
շով...
Մերթ Ալագեազի սպիտակ զլխով,
Կուգան ու կերթան թուխալ ամպերը
հով.
Ու գոռզոռոցով կաւետեն գարուն,
Կող ի կող նստած մանրիկ սարերուն:
Փշում է արդէն թարմ ու անուշ բոյր
Մօտիկ սարերուն, ողջոյն ու համբոյր.
Եւ ուղարկում է հովերով, հողմով
Դար ու փոսերին իրան չորս կողմով:
Մերթ տարերային կուով բռնւած
Որոտ ու կայծակ արձակում կատղած,
Մերթ մարմանգ հովը կանէ տարուրեր,
Ալագեազ տեղով փոխում է եթեր:
Երամի է գալիս զարնան հաւքերուն,

Ճռւղում, ճախրում կանաչ թհերուն:
 Ամեն մի քօլին մի թռչուն հասաւ,
 Ամեն արմատից փունջ ծաղիկ ըըսաւ:
 Ապասած կրծքին թաւ մարդ ու արօտ՝
 Անթել ու անձեռ խալիչէն խօրօտ.
 Փոել է հաւսար անծայր ու անտակ,
 Ուսերից բոնած մինչև ոտնատակ...
 Խալիչի տակին տնքում է սարը,
 Պիտի պատրաստէ տարւայ պաշարը.
 Մարդկանց հացը տայ, տաւարին
արօտ,
 Կենասառու ջուրը՝ ծարաւին կարօտ:
 Ամեն տեղ աղբիւր առու է հոսում,
 Ամեն վարդենուն բլրուլ է խօսում.
 Ելագեազ սարը ուրախ ու գւարթ,
 Զուգւում է կամաց, համեստ ու համե-
դարտ...
 Ու գարնան կոչն է ոչխարին, մալին,

Գիրկ ու ծոց բացել կանչում մհալին:
 Չորս կողմից եկաւ տաւար ու նախիր,
 Եկողն հարուստ է, աղքատ թէ ֆախիր.
 Անխափիր ժպառուն կեանք է ներշնչում,
 Ալագեազն իրան ամենին կանչում:

Շըլ՛նկ ու զըլնկ քոչւորն է գալիս,
 Չայների կանչը արձագանք տալիս:
 Մի կողմից թուրքը, մի կողմից քիւրդը,
 Քոչով բարխանով յելան հին իւրդը.
 Մարալանջերին տեղ բռնին մէկ-մէկ,
 Զղով, չադրով կազմեցին բինէք:
 Կանաչին՝ կարմիր կանայք կերեան,
 Հարսներն ալմալի դուրս էկան սէյրան:
 Զմեռւայ դաժան զգւանք տանջանքից,
 Զորանն ազատաւ իր չարքաշ կեանքից:
 Կովը կուշտ ուտում, հորթին բառա-
չում,

Շունը թան լակում, կազկանձում հա-
չում.

Ոչխար ու տաւար ծեփ տւին սարին,
Չորանը ուրախ նստաւ մեծ քարին
Փշեց դաւալը, գեղգեղեց լալկան,
Մելամաղձ ձայնով կանչեց սիրական:
Չընաղ թրքուհիք նստել են մի տեղ,
Թռուուն քրդուհիք նայւածքով շքեղ
Երգում են Զարէն ու Սիամանթօն,
Դունկունում անվերջ լոլոն ու պօն:
Թրքուհիք հագած զար ու զարբար խաս,
Մանիով երդում Ազիզ ու Աբբաս:
Տեղ տեղ նստել են բարձր մեծ սարին,
Վառւած գովում են կարօտած եարին:

Ոչ օրին աշեց և ոչ գիշերին,
Հայն էլ դուրս եկաւ, յելաւ փեշերին,
Դուրս եկաւ գիւղից քոչւորը եայլաղ,

Աթակին փեշին ցւրաւ աջ ու ձախ:
Աղջիկ ու հարսներ հե ի հե հասան,
Կարօտած սրտով Ալագեազ տեսան,
Ել երբ կհարցուն, կանաչ, ծաղիկ,
Փուշ,

Վազ տւին դէպ վեր ուրախ անզգոյշ
Եւ ողջը բորիկ մախմուրի վրէն,
Կոխ տալով կակուզ առաջ կըքելեն.
Ու երկու կողմից տեսարան չընաղ,
Տեղն ու տեղ բացւեց նոր կեանը նոր
ծիծաղ:

Պճնազարդ սարը հագել է հրաշք,
Գեղեցիկ սեսը թխահեր թխաչք:
Երփներանդ գոյնով սարը կեանք առաւ,
Կարմիր ու կանաչ ալ խաշխախ դառաւ:
Մութ մութ ամպերը կուգան ու կեր-
թան,
Հովը շւում է սարին շընկընկան...

Գարունը անուշ երգում է օրօր,
Սար ու քար բռնած կիսաղան շօրօր...
Աղջիկն աղջկան ու տալը հարսին,
Ղարիբ քոյրելին, ծանօթին, տեսին,
Տար-տար համուսում ուժունքում

իրար,
Դարդից ու եարից առնում նոր խա-
բար...

Փչեց հով քամին սըլսըլան անուշ,
Կանաչ ու ծաղիկ շննեց խև ապուշ.
Ալիք ու ալիք գետնին կծփան,
Մեծ ծովի նման խռով ու ծածան...
Ել որտեղ ծաղիկ, կամ կանաչ տերե,
Գտնես ու ջոկես կապոյտ, կարմիր, ու
Ծոփիկ ու մոփիկ փաթոլոր կուտան,
Թռջկւին փունջ-փունջ ու կըտընկ-տըն-
կան...
Երջանիկ դարնան խաղն է այս ուշիկ,

Ու փափուկ սեռի ձայնն էլ անուշիկ,
Եայլի կը կանչեն եայլաղի սարին,
Հազար գովք կուտան սարին ու քարին:
Ծեր Ալագեաղը՝ համ կեանք է, համ
սէր

Եւ բաժանում է բարիք ու նւեր.

Գիշեր ու ցերեկ հարսնիք ու պար է,
կանաչը՝ դարման, ծաղիկը՝ եար է...
Յաւալին այն է, մի բան է պակաս,
Ծերունի սարին տալիս է մեաս.

Դրսեանց ուրախ կեանքը անդադրում,
Ուսերից վերև գլուխը արտում...

Գաղաթի վրէն յաւէտ ձուն ու բուք,
Ճակատը սառած, աչքը արտասուք.
Կաթիլ ու կաթիլ կուգայ կհոսէ,
Ծաղիկ այտերին արցունք կրսէ...

Ուստի ներքուստ եարալի ու խոց երբեմն կուգայ միջից խուլ տնքոց:

Ելի սև դարդը ծածկում՝ ծրաբում,
Ու դարդի դօշին վարդեր է շարում:
Միշտ կուզէ կանչել աղջիկ ու տղայ,
Կանչեն ու երգեն՝ ինքը պար խաղայ.
Եղակս է մարդը, քէֆչի է ուրախ,
Հետն էլ միշտ կանէ անվերջ ախ ու
վախ...

Ծամերը ճերմակ, քօղը սև վալայ,
Կուրծքը բաց մաւի ու կարմիր լալայ.
Զզպղուն ջուրը նաղարայ, նւագ
Ծիլծիլ ժայռերը կողքին թաշկինակ:
Եղ օրին ուրախ, ուրախ ու արբած,
Մայիլ է եղել իր տեսքին տարւած.
Ոչ իրան կաշէ, ոչ ճերմակ միրքին,
Բուլըսուլ ամպերից բռնել իր ճեւքին,
Մերթ ծանը խաղում հարհանդ օդալար,
Մերթ հրէշի պէս թռչկոտում վեր
վար...

Գիշեր ու ցերեկ հարսանիք ու պար,
Ինքն իրան դառել սարերին սարդար:

Քանի արև կար՝ ժպտում էր գւարթ.
Մութը մօտեցաւ՝ արել հանդարտ
Շուռ տւեց դէմքը համեստ ու պար-
կեշտ,

Ու վերջալուսին տւեց հրաժեշտ...
Անցաւ կանաչ ծով, հանգաւ ու մարաւ,
Ծիծաղկոտ սարը տրտմեց, խաւարաւ:
Արդէն զիշեր է ու մութն է իսպառ,
Լուսինը փայլեց աստղերի հետ խառ...
Բինէն վառ ճրագ, դռները կրակ,
Աստղերի, լուսնու ցոլքին հակառակ,
Ճարճատող հուրը ծառանում է վեր,
Դէպի պաղ լուսին փողփողուն աստղեր,
Հրեղէն լեզուք ոլոր ու մոլոր,
Մփոռում են լոյսը սարի չորս բոլոր...

Տեսաւ նա խառը ցոլքեր անդրագարձ
Ու տիրազւարթ փառ-փառ ծիծաղաց:
Գարնան եղանակ ու գիշերը հով,
Կեանքը քնած է լուռ ու անխռով.
Բարձր քըքիչը տարածեց հեռուն,
Շարժեց նախանձը ուրիշ սարերուն...
Ղարախաչ, Սամսար, Աբուլ ու Եալ-
բուզ,
Քոթանդաղ, Մղարթ, Մասիսն ու
Սուլդուզ,
Նպատ ու Նէմրութ, Սիփան և Գրգուռ,
Սևարեն, Անտոք, Զեռնակ ծաղկե-
հուռ,
Եւ որքան էլի բլուրներ, սարեր,
Ապառաժ ժայռեր ու ծիլ-ծիլ քարեր,
Ողջը ուզում են գան սէյրի թափին,
Տեսնեն Ալագեազ, տեսնեն զինարբին.
Զուր խմեն անուշ, հոտ քաշեն համով,

Մնձրւած սրտով այց ելնեն կամով,
Կոխ տան բալասան, յասմիկ, արմաղան,
Զեռք ձեռքի բռնեն շօրօր պար խաղան.
Բայց ափսոն հազար ու հազար ափսոս,
Ֆալակը վաղուց փորել է խոր փոս...
Մաստարա, Շիրակ, Աբարան, Արան,
Դիրքով խորխորատ՝ եղել են դարան...
Կուզեն մօտենալ սիրով համբուրել,
Ճակատ ճակտի տալ գուրգուրել,

Գարւել, Սկ գիրն է զըւել նըանց ճակատին,
Եթէք չհասնել այդ նպատակին...
Մնան յաւիտեան դէմ ու դէմ մխւած,
Հայիլ ու մայիլ տեսքին ծարաւած...:



ԳՐԱՆՑՈՒՅԹ 5 ԿԱՊԵ

ՎՐԱՆՑՈՒՅԹ

Պահպատճել Ալեքսանդրոպոլ, Գործ
Բիблոթեկա Չիտալնի.

ԳԻՒՆ Է 5 ԿՈՎԵԿ

Պահանջ Ալեքսանդրով, Գործ.
Библиотека Читальня.

ՀՀ Ազգային գրադարան



NL0350238

40829/I